ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՈՒ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում.—Փետրվարի 18-ին, հինգշաբթի: Տոն «Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմի»: Առավոտյան ժամը 11-ին ղողանջում են Մայր տաճարի զանգերը և ազդարարում ս. պատարագի արարողության սկսվելը: Պատարագում է արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, իսկ ս. պատարագի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի երգչախումբը:

Հավատացյալների հոծ բազմությունը լցնում է Մայր տաճարը և նրա շրջափակը:

Ժամը 11.30-ին թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ օրվա տոնի կապակցությամբ քարոզում է վրահայոց թեմի առաջնորդ գեր. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը: Սրբազանը դրվատում է Վարդանանց հայրենասիրական վեհ գործունեությունը և ցույց տալիս, թե նրանց հերոսական ոգին դարեր շարունակ ինչպիսի մեծ ուժ է հանդիսացել մեր բազմաչարչար ժողովրդի գոյատևման ճանապարհին: Իր քարոզի վերջում Կոմիտաս սրբազանը շնորհավորում է Հայոց Հայրապետի անվանակոչության տոնը, ցանկանում է Նրան քաջառողջություն, արևշատություն՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության:

Հավարտ ս. պատարագի Իջման սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթանք, Նրա անվանակոչության տոնի առթիվ: Հավատացյալների հոծ բազմությունը հերթով համբուրում է Վեհափառ Հայրապետի Աջը և բարեմաղթում Նրան երկար ու երջանիկ օրեր:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան: Հանուն Մայր Աթոռի միաբանության տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը, ցանկանում Նրան քաջառողջություն, արևշատություն: Բոլոր ներկաները համբուրում են Վեհափառ Հայրապետի ս. Աջը և մեկ անգամ ևս շնորհավորում Նրա անվանակոչության տոնը:

Հանդես հոգևոր ճեմարանում.—Նույն օրը, ժամը 13.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հանդես՝ նվիրված ս. Վարդանանց տոնին: Բոլոր ներկաները հոտնկայս ունկնդրում են Հայաստանի պետական հիմնը, որով սկսվում է հանդեսը:

Բացման խոսք.—Հանդեսը բացում է Մայր Աթոռի միաբան և հոգևոր ճեմարանի դասատու հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և ասում.

«Վեհափառ Տեր, այսօր դարձյալ Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց տոնը մի անգամ ևս համախմբում է մեզ այստեղ, Ձերդ Սրբության շնորհաբեր ներկայությամբ մեր հարգանքի տուրքը մատուցելու հայ եկեղեցու և Հայոց աշխարհի մեծ նահատակների խնկելի հիշատակին, նահատակներ, որոնք «կատարեցան ի մեծի պատերազմին ի դաշտին Ծաւարշանայ»:

1500 տարիներ է մեզ բաժանում հերոսական այդ ժամանակից, բայց նրանց հիշատակը երբեք չի խամրել, և մեր ժողովրդի հերոսական պատմությունը տոգորված է եղել Ղևոնդյանց ուխտապահ քահանաների և Վարդանանց հայրենասեր քաջամարտիկների շնչով և ոգով:

Ղևոնդյանց նահատակությունը և Վարդանանց հերոսամարտը հանուն խղճի և կրոնի ազատության և հայրենիքի ազատագրության համար մղած մի հերոսամարտ է, որի ոգեկոչումով դաստիարակվել են սերունդներ:

Վարդանանց պատերազմը պայծառ վկայությունն էր 4-րդ դարի՝ Լուսավորչի աղոթքով և աշխատանքով հայ հոգիների մեջ ներթափանցած քրիստոնեական կրոնի վեհ սկզբունքների և գաղափարախոսության: Եթե Լուսավորիչը չբերեր Ավետարանի լույսը մեր հոգիների մեջ, մենք վստահաբար չէինք ունենա Ղևոնդյանց նահատակությունը և Վարդանանց հերոսամարտը:

Այս մտածումի լույսի տակ Վարդանանց պատերազմը հերոսացումն է հայ եկեղեցու և հոգևորականության և հավաքական սրբացումը հայ ժողովրդի:

Այսօր մեզանից ոչ ոք չի պահանջում Ղևոնդյանց և Վարդանանց նահատակությունը հայ մնալու և հայ ապրելու համար: Բայց ամեն ժամանակաշրջան սերունդների առջև դնում է նոր խնդիրներ: Այժմ մեր խնդիրն է ապրել և ապրեցնել Ղևոնդն ու Վարդանը մեր կյանքի և մեր աշխատանքի մեջ:

Սիրելի ներկաներ, այսօր նաև ազգիս Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնն է:

Նորին Սրբությունը Ղևոնդյանց եկեղեցանվեր նախանձախնդրությամբ և Վարդանանց հայրենասիրական ոգով ավելի քան 15 տարիներ Իր օծյալ ձեռքերի մեջ է պահում Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր բարձրագույն հեղինակությունը, նոր ոգևորություն ու շունչ և նոր թափ հաղորդելով հայրենասիրության:

Ամենայն Հայոց Հայրապետի անձի և հանգամանքի մեջ է, որ մարմնավորվում և շոշափելի են դառնում Ղևոնդ երեցն ու քաջ Վարդանը, «վասն Ցիտուի և վասն հայրենեաց» Նրա կատարած բոլոր գործերի և ձեռնարկների մեջ:

Թող օրհնվի հավետ հիշատակը Ղևոնդ երեցի և քաջ Վարդանի:

Թող Աստված երկար կյանք տա մեր Վեհափառ Հայրապետին:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ներկաների, որդիական խոր երախտագիտությամբ և սիրով կրկին անգամ շնորհավորում ենք Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը»:

Օրվա գլխավոր բանախոսն է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնակատար արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, որը հանդես է գալիս ս. Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված հետևյալ ճառով.

«...Մահ ոչ իմացեալ՝ մահ է,
մահ իմացեալ՝ անմահութիւն է...»:

(Եղիշէ)

Հայ ժողովրդի պատմության մեջ կան ժամանակաշրջաններ, տարեթվեր, որոնք ո՛չ թե մթագնվում, դժգունում են դարաշրջանների հեռավորության մեջ, այլ ինչքան հեռանում ենք, այնքան ավելի մոտիկ ենք զգում, այնքան անմիջական՝ մեր առօրյա կյանքի մեջ, մեր արյան իսկ մեջ:

Ս. Ղևոնդյանց և Վարդանանց պայքարի տարեթիվը, նրա տոնակատարությունը բացառիկ տեղ է գրավում մեր ազգային-եկեղեցական պատմության, համաժողովրդական հերոսամարտի, հոգեկան արժեքների պահպանման գոյամարտում: Վարդանանց և ս. Ղևոնդյանց տոնակատարությունը հայ եկեղեցու և ժողովրդի հերոսացման տոնն է:

Վարդանանց հերոսամարտի պատմական նշանակությունը ավելի հստակ և հասկանալի է դառնում տվյալ դարաշրջանի քաղաքական, հասարակական, կրոնական և գաղափարական հոսանքների լույսի տակ:

Ի՞նչը ստիպեց հայ ժողովրդին 5-րդ դարում մղելու համաժողովրդական այն պայքարը, որը դուրս է գալիս համազգայինի սահմաններից և դառնում համաքրիստոնեական, արևմուտքի մշակույթի և քաղաքակրթության պահպանման համար մղվող պատերազմ, մի պատերազմ, որը դարձավ մեր ժողովրդի անկախության, խղճի ազատության, հայրենասիրության համար միշտ հուրհրացող, հավերժ կենդանի խորհրդանիշ:

226 թվականին Պարսկաստանում տապալվում է պարթևական գերիշխանությունը:

301 թվականին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն է ընդունվում և դրանով ուժեղանում է սասանյանների ու մազդեզական կրոնի հետևորդների անհաշտ թշնամությունը հայերի նկատմամբ:

Հայ ժողովուրդը քրիստոնեությունը ընդունելով նախ ամբողջական իմաստով սահմանազատվում է հարևան պետություններից և ստեղծում իր ազգային կյանքը՝ դառնալով միաձույլ ու միակամ: Հակառակ այն բանին, որ հարյուր տարուց ի վեր հայ ժողովուրդը քրիստոնեությունն էր ընդունել, սակայն դեռ լրիվ քրիստոնյա չէր: Հայ ավագանին, եկեղեցու գերագույն մարմինները և ժողովուրդը մտահոգված էին հայ ժողովրդի ճակատագրով: Նրանց անհրաժեշտ էր մի նոր զենք, որը կարողանար մասնատված հայ ժողովրդի զավակներին հոգեպես միաձուլել և գալիք դարերի դեմ պայքարի հանել: Նրանք զգում էին, որ, Հայաստանյայց եկեղեցին, միակ հենարանն է, որի կամարների տակ հայը կարող է հոգեպես միաձուլվել:

Մեսրոպ Մաշտոցյան սերունդը գիտակցում էր, որ հայ ժողովրդի գոյությունը լուսավորության մեջ է: Ստեղծվում են հայկական տառերը, հայ ժողովրդի հոգու և մարմնի փրկության վեմ-քարը: Մեսրոպյան տառերը երկնայրի սուր էին՝ պայքարելու և՛ հույների, և՛ պարսիկների դեմ: 5-րդ դարի սկզբին տառերի գյուտով, հայեցի, քրիստոնեական նո՛ր մշակույթով, լեզվով, դպրությամբ, Աստվածաշնչի թարգմանությամբ հայ ժողովրդի գիտակցության մեջ կատարվել էր բարոյական խոր հեղաշրջում, նրա երակների մեջ ներարկվել այնպիսի ուժ, որը նրան դարձրել էր արի և տոկուն՝ գալիք բոլոր փորձություններ դեմ: Մեսրոպյան տառերը բյուզանդացումից և պարսկացումից փրկեցին հայ լեզուն, մշակույթը և հոգին: Եկեղեցին ու լեզուն դարձան ժողովրդին միաձուլող, ամբողջացնող մի ուժ: Եվ Վարդանանց պատերազմը եկավ իր արյունով հաստատելու ու ամրապնդելու այդ ոգին:

Պարսկական արքունիքը շատ լավ էր հասկանում, որ ջնջելու համար իր հպատակ ժողովուրդների հայրենասիրության ոգին, պետք էր նախ ջնջել նրանց հավատքը, կրոնը:

Հայաստանի հպատակեցումը մեծ նշանակություն ուներ նրանց համար, որովհետև՝ «և յորժամ Հայք սերտիւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են»,—ասում է Միհրներսեհը (Ղ. Փարպեցի):

Հազկերտ թագավորը մոլեռանդ մոգերի, պարսկական ավագանու թելադրանքով 449 թվականի վերջին կրոնափոխության առաջարկ է անում հպատակ քրիստոնյա բոլոր երկրների ժողովուրդներին: Հղած հրովարտակում ասվում էր. «Զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք»: Այս առաջարկությունը ավելի է սրում դժգոհությունը: Հայ ժողովուրդը Արտաշատի ժողովում իր խղճի ձայնն է բարձրացնում և մերժում՝ ասելով.

«Ցայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ եւ են դառն հարուածք... ի քէն տանջանք և մէնջ յանձնառութիւնք. սուր քո՝ և պարանոցք մեր»:

Այս խրոխտ պատասխանը մարտահրավեր էր պարսկական բռնակալության դեմ՝ հանուն հողի, ջրի, հավատքի, պատերազմի մարտահրավեր էր «վասն Յիսուսի և վասն հայրենեաց»:

Հայերը, սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, 451 թվականի սկզբներին ամրացնում են բերդերը, կարգի բերում ռազմամթերքի և ուտեստեղենի պահեստները և զորակոչ են հայտարարում: Հայ հոգևորականությունը Ղևոնդ երեցի գլխավորությամբ ոգեկոչում է հայ ռազմիկներին և կոչ ուղղում հավաքվելու սպարապետի դրոշի տակ: Ստեղծվում է ապստամբների բանակ, կանոնավոր զորքից և աշխարհազորականներից, որոնց թիվը հասնում է 66000-ի:

451 թվականի Ավարայրի պատերազմի նախօրեին պարսիկները ամեն կերպ աշխատում էին քանդել հայերի, վրացիների, աղվանների միությունը:

Հայ ժողովուրդը իր գոյությունը, լեզուն, մշակույթը, հողը, ընտանիքը պաշտպանելու համար մենակ է մնում իր ուժի և իր Աստուծո հետ, և այս նրան երբեք չի հուսահատեցնում, որովհետև նա շատ լավ գիտեր, որ՝ «...Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»: Նա հավատացել էր, որ իր հավատքը և հայրենասիրության ոգին անպարտելի են:

451 թվականի գարնանը պարսկական 180 000-անոց բանակը, դավաճան Վասակ Սյունու և նրա համախոհների զորքի հետ միասին, շարժվում է դեպի երկրի խորքը ու կանգ առնում Արտազ գավառում: Պարսկական բանակը ուներ վարժեցրած փղերով կռվող մի գունդ և «Անհաղթ մատյան» կոչված 10 հազարանոց «անպարտելի» հռչակված գունդը:

Վարդան սպարապետը իր զորքի հետ Արտաշատի կամուրջը անցնելով, մայիսի 25-ի երեկոյան կանգ է առնում Ավարայրի

դաշտում, Տղմուտ գետի հյուսիսային ափին, որի դիմաց բանակել էին պարսիկները: Ռազմի դաշտ էին եկել Հայոց Հայրապետը՝ հոգևորականների խմբով, կանայք, աղջիկներ՝ զինվորներին ոգևորելու և վիրավորներին օգնելու համար:

Սպարապետը ստուգում է իր բանակի մարտունակությունը և զորքի առաջ հանդես է գալիս փայլուն ճառով, որը ուժի, համեստության, հաստատամտության, հայրենասիրության ու քրիստոնեական հավատքի խտացումն է.

«Մի երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմ ճշմարտութեան, և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտի, բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեսցուք»:

Կրակոտ ճառով հանդես է գալիս Ղևոնդ Երեցը, որը շեշտում է, որ «Մէր յոյսն մէզ կրկին երևի, եթէ մեռանիմք՝ կեանք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան»:

Քրիստոսի արյամբ և մարմնով հաղորդվում են բանակի բոլոր զինվորները: Նրանք և՛ մարմնապես, և՛ հոգեպես պատրաստ էին արևածագի հետ մարտի դաշտ դուրս գալու, պաշտպանելու հայրենի հողը, հավատքը, ընտանիքը: Հայ ժողովուրդը ռազմի դաշտ էր իջել՝ զենքով իր ապրելու և ստեղծագործելու իրավունքը նվաճելու: Ավարայրում կռվող հայ ժողովրդի համար քրիստոնեությունը միս և արյուն էր: Նրանք հաղթելու համար էին մարտի դաշտ դուրս եկել:

451 թվականի մայիսի 26-ի առավոտյան հարձակումը սկսվում է նախ նետաձգությամբ, ապա փոխարինվում է նիզակամարտի ու սուսերամարտի: Հայկական զորամասերը, ոգևորված մոտենում են Տղմուտ գետին, ապա անցնում և նրանց շեշտակի հարվածների տակ թշնամին ընկրկում է: Հայերը կռվում էին թվով երեք անգամ մեծ բանակի դեմ: Բայց Վարդանը ուշ երեկոյան ընկնում է հերոսի մահով, շրջապատված թշնամու գերազանց ուժերով:

451 թվականի մայիսի 26-ին հայկական բանակը Ավարայրի դաշտում թողնում է 1036 սպանված, իսկ թշնամին՝ 3544:

451 թվականի Ավարայրի ճակատամարտը ամրապնդեց հայ ժողովրդի հավատքը: Քրիստոնեությունը ուրանալ՝ նշանակում էր ո՛չ միայն ուրանալ հավատքն ու եկեղեցին, այլ նաև ազգությունը և հայությունը: Վարդանանց օրով, ինչպես և հետագայում, միացել ու նույնացել են մեր ժողովրդի գիտակցության մեջ հայություն, քրիստոնեություն, ժողովուրդ, հավատք, ազգ և եկեղեցի հասկացությունները:

Միության այս ոգին, որը սկսվեց Վարդանանց հերոսամարտով, շարունակվեց շուրջ 30 տարի: Հայ ժողովուրդը իր պայքարը շարունակեց և վերջիվերջո 481—484 թվականների ապստամբության հաղթանակով, Նվարսակի դաշնագրով Վարդան Մամիկոնյանի եղբոր որդին՝ Վահան Մամիկոնյանը, պարտադրեց թշնամուն ընդունել վերջնականապես հայ ժողովրդի հոգու անկախությունը, իր ներքին կյանքը տնօրինելու իրավունքը: Պերոզի հաջորդ Վաղարշ թագավորը Նվարսակի դաշնագրով ստորագրում էր պարսկական քաղաքականության պարտությունը, որով հավերժանում էր Վարդանանց ոգին և դառնում հայ ժողովրդի գոյության խարիսխը:

Այս իմաստով Վարդանանց պատերազմը լոկ մի դյուցազնական դրվագ չէ, այլ դարեդար ապրող, ներշնչող, կազմակերպող անտեսանելի մի ուժ, մի ոգի, հրեղեն մի սյուն հայության երկնակամարի վրա միշտ բոցավառվող, որը առաջնորդել է մեր ժողովուրդը պատմության քառուղիներում:

Վարդանանց հերոսամարտը մեր ազգային արժանապատվության բարձր գիտակցության, հայրենասիրության, հերոսության, նահատակության պատմությունն է, որը ցնցում է յուրաքանչյուր հայ մարդու և մղում նրան հավատարմության դեպի հայրենիքը. հայրենի արժեքները, եկեղեցին, լեզուն ու մշակույթը:

Նրանք մեռան, որպեսզի ապրի հայրենիքը, ժողովուրդը և եկեղեցին:

Հայաստանյայց եկեղեցին երախտագիտությամբ ամեն տարի ոգեկոչում է սուրբ Ղևոնդյանց և սուրբ Վարդանանց հիշատակը պատարագով, աղոթքով ու խնկով:

Այսօր էլ Վարդանանց պատերազմը ամբողջ աշխարհով մեկ ցրված հայերիս համար շարունակվում է տարբեր պայմաններում և տարբեր ձևերով: Թող Մեսրոպ Մաշտոցյան լեզուն, Հայաստանյայց եկեղեցին, հայրենիքի պայծառ իրականությունը, Վարդանանց գոյատևելու և հաղթանակելու կենդանի հերոսական ոգին լինեն մեզ հետ:

Երախտագիտական խոսք ունենք ասելու ազգիս Հայոց Հայրապետին՝ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, որի անվանակոչության տոնն է այսօր:

Մաղթում ենք Ձերդ Սրբությանը երկար ու երկար առողջ և բեղմնավոր տարիներ՝ ի փառս Հայաստանյայց եկեղեցու և ժողո-

վրդի: Թող Աստուծո աջը միշտ հովանի լինի իր իսկ հիմնած Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և նրա Գահակալի վրա:

Թող միշտ պայծառ մնա Հայց. եկեղեցին Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի օրհնության ներքո, հայ ժողովուրդն ու մեր հայրենիքը միշտ կանգուն, որպեսզի մեզ ավանդ հասած մեր սրբությունները պաշտպանելու համար Վարդան Մամիկոնյանի խուսքերով համարձակ ասենք.

«Պատրաստ եմք ...ի հալածանս և ի մահ... Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց... Բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի խառնեսցուք»:

Հանդեսի գեղարվեստական մասը.—Հոգեվոր ճեմարանի երգեցիկ խումբը, կատարում է «Նորահրաշ», «Արիացեալք» շարականները և «Իմ հայրենեաց», «Պլպուլն Ավարայրի», «Ով հայոց աշխարհ» խմբերգերը:

Ն. Զարյանի «Զայն հայրենական» պոեմից մի հատված է արտասանում Գ. լսարանի ուսանող Կտրին սրկ. Ներսիսյանը, Ռ. Պատկանյանի «Հիմի՛ էլ լռենք» բանաստեղծությունը՝ Ա. դասարանի ուսանող Խաչիկ Գյուլանջյանը, Գ. լսարանի ուսանող Արտաշես սրկ. Մուշեղյանը՝ Եղիշեի «Տիկնայք փափկասունք» հատվածը:

Վերջում օրհնության խոսք է ասում ազգիս Վեհափառ Հայրապետը և մեկ անգամ ևս ոգեկոչում սուրբ Վարդանանց քաջերի խնկելի հիշատակը, որոնք, արհամարհելով մահը, սուրը ձեռքերին իջան Ավարայր՝ փրկելու համար հայրենիքը, մեր հավատքն ու նրա սրբությունները:

Սուրբ Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսությունը վերջանում է ցերեկվա ժամը 14.30-ին՝ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով: